ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 7-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի քննարկման, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների ամփոփման, ինչպես նաև կարգապահական ու կազմակերպչական այլ հարցերի լուծման նպատակով, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 14.03.2023 թվականի N 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին կից խորհրդակցական մարմին:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին կից խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կենտրոնական ապարատի կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝

1) Խորհրդակցական մարմնի նիստերի կամ խորհրդակցությունների համար, ըստ իրավասության, ապահովել անհրաժեշտ նյութերի տրամադրումը խորհրդակցական մարմնի անդամներին:

2) Յուրաքանչյուրն իր մասով ապահովել խորհրդակցական մարմնի նիստերի կամ խորհրդակցությունների արդյունքում տրված հանձնարարականների պատշաճ և սահմանված ժամկետում կատարումը:

3) Տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվությունները, ըստ նիստերի կամ խորհրդակցությունների արձանագրություններով սահմանված ժամկետների, ամփոփել և զեկուցել:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«08» 05 2025թ.
ք.Երևան

Հավելված
ՀՀ ՆԳՆ ոստիկանության
պետ-ներքին գործերի
նախարարի տեղակալի
2025թ. մայիսի «08»-ի
N 7 -Լ հրամանի

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին կից խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ խորհրդակցական մարմին) նախագահ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ:

2. Խորհրդակցական մարմնի անդամներ՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալ,

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալ,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ներքին զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության պետի տեղակալ,

5) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության պետ,

6) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի պետ,

7) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ փնտրողական վարչության պետ,

8) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պետ,

9) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության պետ:

3. Խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ վերլուծական վարչության քրեաբանական վերլուծության բաժնի իրավասու ծառայող: